

հայ ժողովուրդին, այդ՝ իրենց ամենէն հաւատարիմ՝ տարրը: Այսօրուան իրականութիւնը սպառնացող գրան:

Ճանաչի՛ր քեզ — հին իմաստութիւն է: Այդ նշանակում է նաեւ՝ ճանաչիր շրջապատդ:

Հին իմաստութիւն է: Հետեւե՛նք գրան: Ուղեղով: Սրտին թողնենք իր բաժինը — բանաստեղծութիւնը:

Բերլին

(Վերջ)



ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳՒՈՒՆ Ը.

ՀԱՅ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԸ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

ԻՍԿԱՊԷՍ կը ճմլուի սիրտը մարդուն՝ երբ կը փորձուի ակնարկ մը նետել ռումանահայ դպրոցներու պատմութեան վրայ, որովհետեւ այդ կը նշանակէ հասկնալ թէ ինչպէ՛ս հիւժեցաւ ու սպառեցաւ ռումանահայը, որովհետեւ այդ կը նշանակէ տեսնել թէ՛ ի՞նչ պի տի ըլլան վաղը դեռ հայ մնացած սա քանի մը շրջանները եւս, եթէ իրենց վարժարանները սպրելու հնարաւորութիւն չունենան ա՛լ:

Մանրամասնութիւնները քրքրելէ առաջ, ըսենք անմիջապէս թէ ռումանահայերը ունեցած են մտաւոր եւ կրթական ոգեւորութեան շրջան մը, որ կարճ տեւած է դժբախտաբար: Ունեցած են իրենց բարգաւաճ դպրոցները, որոնք պահ մը կրցած են վառ պահել հայ լեզուն ու անոր հետ հայ ոգին հին հայ գաղութի մը մէջ: Այդ դպրոցներուն հետ շիջած է նաեւ դարերուն աւանդը՝ փլատակներ միայն հասցրնելով մեզի:

Հին ՕՐԵՐՈՒ ՄԷՋ

Անկարելի եղաւ ինձի ստուգել թէ ռումանահայերն ե՞րբ ունեցած են իրենց առաջին կրթարանը: Ո՛չ մէկ գրաւոր արձանագրութիւն գտայ որ ազատուցանէր մեզի թէ հայ դպրոց գոյութիւն ունեցած է ժԹ. դարէն առաջ: Թէ ուսման հետամուտ էին հայերը՝ ոչ մէկ տարակոյս այդ մասին: Կաթոլիկ եպիսկոպոս մը, Պանտինուս, որ ժԷ. դարուն գտնուած է Եաշ, կ'ըսէ թէ իր օրով առնուազն քսան

դպրոցներ գոյութիւն ունէին Եաշի մէջ, երկու հարիւր աշակերտներով, որոնց մէջ ռումէններ, ութթէններ, յոյներ եւ հայեր կային:

Հաւանաբար հայ եկեղեցիները գոնէ խուցիւր ունէին ուր տիրացու կը պատրաստուէր: Մեզի հասած են այդ խուցերուն մէջ գրուած ձեռագիրներն իսկ: Մտաւոր կեանք անշուշտ սր կար այդ եկեղեցիներու կողքին: Բայց նոր օրերու իմաստով կրթական շարժում գտնելու համար պէտք է մինչեւ ժԹ. դարու սիկորները դալ: Ու արդէն այդ օրերուն կը գուզադիպի հայ կեանքի մէջ դպրոցներու առաջին փթթումը քիչ մը ամէն տեղ:

ԵԱՇԻ ՄԷՋ

Եաշէն կ'ուզենք սկսիլ ռումանահայ դպրոցներու կեանքը պրպտել: Պուքրէշն է այսօր ռումանահայութեան շնչերակը, բայց Եաշն էր անոր միջնաբերդը երէկ: Մոլտովայի մայրաքաղաքը՝ որ մեծ դեր կատարած է ռումէն ժողովուրդի մտաւոր կեանքին մէջ, կորիզ եղած է հայ կեանքին համար ալ, մանաւանդ երբ Մոլտավ իշխանները իրենց գահը Սուչովայէն Եաշ փոխադրեցին, իրենց հետ Եաշ բերելով նաեւ հայ եպիսկոպոսին աթոռը, ուրեմն եւ հայ կեանքի բազկերակը: Ասկէ գառ Եաշը նըւազ ենթակայ էր թրքական ազդեցութեան՝ քան Վալաքիոյ մայրաքաղաքը Պուքրէշ, ուր աւելի կենդանի եւ աւելի անմիջական էր շրջումը Պոլսոյ եւ թուրք բարբերուն հետ: Եաշի մէջ, հետեւաբար, հայերը եւս հետու էին այդ շփումէն, ու կրնային աւելի տեւել իրենց ա-